ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մրցույթային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու մրցույթ:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. մայիսի 20-ին՝ ժամը 11:00-ին, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 22, Վանաձորի համայնքապետարանի շենքի 4-րդ հարկում, դահլիճում:

ՄՐՑՈՒՅԹԻ ԵՆ ԴՐՎՈՒՄ

Լոտի անվանումը	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Կադաստրային ծածկագիրը/ Վկայականի համարը	Մակերեսը / հա	Վարձավճարի մեկնարկային գինը /սակարկվող/	Հողամասի նպատակային Նշանակությունը /տրման ժամկետը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների՝ ներառյալ սերվիտուտի առկայությունը	Ճանապարհների առկայության մասին տվյալներ	Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Շրջակա միջավայրի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները
1.ա.1	Գ. Դարպաս	06-033-0222-0010 30032026-06-0036	2,87636	տարեկան 13 դր /1քմ	Գյուղատնտեսական նշանակության վարելահող (5 տարի ժամկետով)	չկան	չկան	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման փաստաթղթերի	Պատմամշակութային գոտում չի գտնվում
1.ա.2	Գ. Շահումյան	06-084-0309-0091 07072025-06-0045	3.5	տարեկան 18630 դր/1հա	Գյուղատնտեսական նշանակության խոտհարք (10 տարի ժամկետով)	չկան	չկան	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման փաստաթղթերի	Պատմամշակութային գոտում չի գտնվում

Մրցույթի ամսական կամ տարեկան վարձավճարի մեկնարկային գները սահմանվում են Վանաձոր համայնքի ավագանու որոշման համաձայն:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է մրցութային հանձնաժողով ներկայացնել հայտ, անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր և Վանաձորի տեղական գանձապետական բաժանմունքի 900235401453 հաշվարկային հաշվին վճարված 25000 (քսանհինգ հազար) դրամի՝ մրցույթին մասնակցության վճարի մուծման անդորրագիր, իրավաբանական անձինք՝ նաև հիմնադիր և լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև՝ այդ փաստաթղթերի և ղեկավար անձի անձնագրի պատճենները: Մրցույթի մասնակիցները մրցույթին մասնակցելու համար մուծում են նախավճար, որը չի կարող գերազանցել մրցույթի հողամասի նախնական գնի 5 տոկոսը:

Մրցույթում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին մինչև 2026թ. մայիս 14-ը, ժամը 18:00: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վանաձորի համայնքապետարանի մրցութային հանձնաժողով: Հասցե՝ Տիգրան Մեծի պողոտա 22: Հեռ. (0322)4-66-10